# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*26.05.2023թ.*

## ՈՐՈՇՈՒՄ 400-Ա

## ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ՍԱԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.07 ՀԵԿՏԱՐ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՌՈՒԲԻԿ ՅՈԼՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 1-ին, 2-րդ և 3-րդ հոդվածներով, համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 1328-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ Գորիս քաղաքի Սաթյան փողոցի թիվ 1 հասցեում գտնվող բնակելի տան տնամերձ հողամասը համապատասխանում է Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1), 2), 3) ենթակետերով սահմանված պահանջներին և այն, որ հողամասն ընգրկված չէ 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, չի հակասում քաղաքաշինական նորմերին և որի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, հաշվի առնելով որակավորում ունեցող անձի կողմից տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (ծածկագիր՝ 2023NY2HCZ), ՀՀ ԿԿ գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների վերաբերյալ 2023 թվականի մարտի 17-ի N US-17032023-09-0192 տեղեկանքը և «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Գորիսի ներկայացուցչության 2023 թվականի մարտի 15-ի № Գր-171 գրությունը և Ռուբիկ Յոլյանի 2023 թվականի մարտի 13-ի դիմումը

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Գորիս քաղաքի Սաթյան փողոցի 1-ին նրբանցքի թիվ 2 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Ռուբիկ Յոլյանին /ծնված 26 . 01 . 1956թ./ իրավունքը վերականգնել օրինական սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 0.07հա մակերեսով հողամասի չափով:
2. Սահմանազատված 0.07հա մակերեսով հողամասի վրա գտնվող՝ Ռուբիկ Յոլյանին պատկանող, օրինական կառուցված 144,9քմ մակերեսով բնակելի տանը կից ինքնակամ 88,1քմ բնակելի շինությունը և 27,1քմ ավտոտնակը ճանաչել օրինական և համարել նրա սեփականությունը:
3. Սույն որոշումն ենթակա է գույքային իրավունքների պետականգրանցման:

ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2023/26/05
Ք.Գորիս